ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«07» «հունվարի» 2022 թ. № 3-Հ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 483-Ա ՀՐԱՄԱՆՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի նոյեմբերի 18-ի N 440-Լ հրամանի հավելվածի 16-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 22-ի «Շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անհատական կազմը հաստատելու և շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի հուլիսի 9-ի N 215-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 483-Ա հրամանը:

1/7/2022

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

«07» հունվարի 2022թ.
ք. Երևան

Հավելված
Շրջակա միջավայրի նախարարի
2022 թվականի հունվարի « 07 »-ի
N 3 - Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ»
պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի

Աննա Մազմանյան	շրջակա միջավայրի նախարարի տեղակալ, խորհրդի նախագահ,
Արկադի Խաչատրյան	շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ,
Վարդան Գրիգորյան	շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու՝ նախարարի,
Լուսինե Ավետիսյան	շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության պետ,
Ոսկեհատ Գրիգորյան	շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության պետ,
Արմինե Հովհաննիսյան	շրջակա միջավայրի նախարարության իրավաբանական վարչության պետի տեղակալ,
Արևիկ Դիլանյան	շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության գնումների մասնագետ-տնտեսագետ: